

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, ՉՉ ՕԳՈՍՏՈՍ, 1931

ԹԻԻ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՔՈՒԼ ԱՎ ԲԻԼԻՃԸՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԴԻՐՔԸ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԲՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆՈՒԿԸ

ՈՒՐԱՐՏԱՑԻՔ

ԲԱՆՏԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՑՈՒԻՆ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՎԵՐ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԹՐԳՄ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԹՐԳՄ. Ս. Գ. ՍԻԻԼԱՀԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՂԵԾ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

«ՐԱՀՆԻԻՄԱԹ»-Ի ԹՂԹԱԿՑԻՆ ՄԷԿ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱԴԱՄԱՆԴԵԱՑ ԿԵԱՆՔԷ ՓՇՈՒՐՆԵՐ

Փ. ՓԱՐԹԱՄԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՋԱՆԻՑԻ ԷՋԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱԼԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրին է 150 դրուշ սուրի։ Սուրիայ համար, և մէկ ու կէս տուրք՝ Եւրոպայի երկրներու համար։

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ։ չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղըրկել փոստի ծախսը։

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, դիւրընթեռնի և մաքուր կերպով։

1. Աղէքսանդրիայէն՝ Տիար Գէորգ Պէյլէրեան մէկ եգիպ. ոսկի Հալէպի Կոյրերու Վարժարանին։

2. Մուսուլէն՝ Յակոբ Շամլեան կէս Օսմ. ոսկի Յունաստանի Հայ Թոքախտաւորներուն, և կէս ոսկի Ասֆուրիյէի Հիւանդանոցին։

ԱՊԱՀՈՎԱԺԱՆ

ԱՆՈՒՇ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ

MCNESS LAXATIVE CANDY

Ծնողներ, մի քոյստեիք որ ձեր զաւակները պնդութենէ տառապին։

Mcness Laxative Candy ն տիպար լուծողական մըն է ճիշդ շոգուլայի նման։ Մանուկները անկէ չափազանց կ'ախորժին որովհետեւ անուշեղէն մը ուտելու չափ հաճելի կը գտնեն զայն։ Զօրաւոր լուծողական մը չէ, այլ մեղմ, և ուէ յոգնութիւն չի պատճառեր մարմինին։ Կատարելապէս ապահով է չափազանց փափկակազմ մանուկի մը իսկ գործածութեան։

Մանուկները առհասարակ լուծողականէ կը խրտչին, հետեւաբար անոնց մէջ պնդութենէ տառապողներու թիւը քիչ չըլլար։ Հետեւանք — մարմնական և մտային տկարութիւն։

Ահա լուծողական մը որ ձեր զաւակները ամենայն յօժարութեամբ պիտի առնեն։

Ձանացէք որ ձեր տուններուն մէջ միշտ գտնուի այս տիպար լուծողականը։

Կարելի է դիմել բոլոր յայտնի դեղարաններուն։

ՄԵՂՄՀԱՃԵԼԻՓՈՐՁԷՓՈՐՁԷ

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսդ երբ կարելի է ածիլուելու գործողութիւնդ չափազանց դիւրացնել։ Mcness մորուք կտրուողնող իւղը թող զայն ընէ քեզի համար։

Կը գտնուի բոլոր յայտնի դեղարանները։

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 22 ՕԳՈՍՏՈՍ, 1931

ԹԻԻ 15

ՍԳՈՒԼ ԱՎ ԲԻԼԻՃԸՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

«Նոր Աւետարներ» ի նախանցիալ թիւին մէջ հաղորդուած էր, թէ Պորտի Մերձ. Արեւելքի ճիւղը որոշած էր Աթէնքի Աստծական. ձեմարանը 1932ին փոխադրել Պէյրութ: Այս որոշումը գործադրութեան պիտի գրուի երբ Պորտի կեդրոնը զայն հաստատէ. ինչ որ մեծապէս յուսալի է:

Պէտք է խոր շնորհակալութեամբ արձանագրել Պորտի այս խիստ պատեհ որոշումը, որմէ մեծապէս պիտի օգտուին Սուրիոյ եկեղեցիները:

Ներկայիս Սուրիան է մեծագոյն Աւետարանական գործի դաշտը Մերձաւոր Արեւելքի մէջ, հետեւաբար շատ բնական է որ անոր պէտք եղած մարդերը ուղղակի իր միջավայրին մէջ պատրաստուին: Դպրոցը և դաշտը մօտէն իրարու հետ տեւական շփում ունենալով իրարու վրայ բարեբար փոխադարձ ազդեցութիւն պիտի ունենան, զիրար աւելի լաւ պիտի հասկնան: Սուրիոյ դաշտին բոլոր գործիչները միշտ պատեհութիւն պիտի ունենան աշխարհիս հոգեւոր կեանքին հետ տեւական հաղորդակցութիւն ունենալու, նորոգուելու, իսկ մեր եկեղեցիները առիթը պիտի ունենան հոգեւոր նոր ոյժերէն օգտուելու համար իրենց ամէն կերպ գործունէութեանց մէջ: Եւ պէտք է աւելցնենաւ թէ Հայ. Աւետ. եկեղեցիները առիթը պիտի կրնան ունենալ ուրիշ յարանաւանութիւններու և եկեղեցիներու հետ շփման գալու համար այս հաստատութեան միջոցաւ:

ԱԴԱՄԱՆԴԵԱՅ ԿԵԱՆՔԷ ՓՇՈՒՐՆԵՐ

Օր մը Պաստոնի մէջ փոքր եկեղեցիի մը կողմէ կին մը ներկայացաւ լաւ հռչակի տիրացած փաստաբանի մը դրասենեակը՝ իր պատկանած եկեղեցիին շէնքը ծախելու մասին խորհրդակցելու համար: Փաստաբանը կատարեալ ուշադրութեամբ մտիկ ըրաւ բարեպաշտ կնոջ խօսքերուն, որոնք մեծ վարմանք կը պատճառէին իրեն: Փաստաբանը ապա փափաք յայտնեց եկեղեցիին բոլոր ժողովուրդը ժողովի մը հրաւիրել և խնդրին մասին հոն խորհրդակցել:

Որոշուած ժամանակին փաստաբանը իր խոստումին համեմատ յիշեալ եկեղեցիին շէնքը գնաց ուր փոքր ժողովուրդ մը հաւաքուած գտաւ:

Եկեղեցիին ծեր աշխատաւորներէն մէկը ոտք ելաւ, և սրտառուէ կերպով յայտնեց թէ եկեղեցիին համար անկարելի է ա'ւ Եւրիշ կերպ տնօրինել՝ բաց ի շէնքը ծախելէ, զանիկայ պահելու համար զուրկ ըլլալով նիւթական միջոցներէ: Բոլոր ժողովականները շուարած էին: Տխուր լուծութիւն մը կը ճնշէր բոլորին վրայ: Փաստաբանը ոտքի վրայ կայնեցաւ, համոզիչ, սրտապնդիչ շեշտով մը ըսաւ.

— Ինչո՞ւ գործը կրկին չվերսկսիլ:

Բայց շէնքը խղճալիօրէն անյարմար էր կրօնական պաշտօն մը կատարելու համար: Ուստի փաստաբանը յարեց:

— Ես վաղը հոս պիտի ըլլամ, դուք ալ հոս եկէք, և աշխատինք շէնքը յարմար վիճակի մը մէջ գնելու որպէսզի յառաջիկայ կիրակի կարենանք հոս կրօնական պաշտօնը կատարել:

Երկար շունչ մը առին ներկաները. սիրտերը ուրախութեամբ սկսան տրոփել, աչքերը սկսան յոյսով փայլել:

Յաջորդ առտուն կանուխ փաստաբանը պէտք եղած գործիքներով գնաց եկեղեցիին շէնքին մէջ աշխատելու:

Ժողովուրդէն մէկը եկած չէր: Բայց շէնքը նորոգելի վիճակ մը չունէր, և փաստաբանը սկսաւ մուրճով և ուրագով տախտակները հանել, քանդել:

Հետաքրքիր անցորդ մը այս գործողութեան ծայնը լսելով մօտեցաւ և դուռէն ներս նայելով ըսաւ.

— Ի՞նչ կ'ընէք բարեկամ հոս:

— Կը քանդեմ նոր շէնք մը շինելու համար, պատասխանեց փաստաբանը:

— Բայց ժողովուրդը այս չի փափաքիր: Ըսաւ զարմանքով:

— Անշուշտ անոնք պիտի չինեն, ըսաւ փաստաբանը զուարթօրէն:

— Եթէ այդպէս է, ևս 100 տոլար կ'ուտամ, և հաճեցէք այս գիշեր իսկ ինծի գալ զայն տունելու համար:

Եւ փաստաբանը շարունակեց քանդել: Բիչ ետքը երկրորդ անցորդ մը մօտեցաւ շէնքին և զարմանքով դիտեց ամէն ինչ, և խնդաց նոր շէնքի մը գաղափարին վրայ: Բայց երբ լսեց թէ այսինչ մարդը հարիւր տոլար խոստացած էր այդ նպատակին համար ըսաւ.

— Բայց բարեկամ, այդ մարդը իր

խոստացած գրամը չի տար, ան նոյնիսկ եկեղեցի չի յաճախեր:

— Այս գիշեր իսկ պիտի ստանամ այդ գումարը, ըսաւ փաստաբանը հաստատօրէն:

— Եթէ այդ մարդէն 100 տոլարը առնես նոյն քան ալ եկուր ինձմէ առ:

Նոյն գիշեր իսկ փաստաբանը ստացաւ այդ երկու հարիւր տոլարը: Ժողովուրդն ալ բերաւ իր բաժինը: Եւ շէնքը շինուեցաւ:

Փաստաբանը զգաց իր մէջը թագուն կոչումը քարոզչութեան: Լքեց իր փաստաբանական ընդարձակ և լաւ վարձատրուած գործը և այս փոքր եկեղեցիին քարոզչութիւնը ընդունեց:

Իր ազգականները շատ այպանեցին զինքը իր առած յիմար քայլին համար: Բայց անիկայ հաճոյք կ'զգար իր կատարած զոհողութեան համար, ինչպէս մարտիրոս մը որ գերագոյն երջանկութիւն մը կ'զգայ իր անձին զոհուելովը:

Այս փոքր եկեղեցին, որուն շէնքը ծախուելով գոյութենէ պիտի զայրէր, կենսունակ և զօրաւոր եկեղեցի մը եղաւ իր նոր քարոզչին զոհողութեամբը:

Այս փաստաբանը, որ քարոզիչ եղած էր, Գնդապետ Բոնուէլն էր, որ իր քաջութեամբը հռչակաւոր եղած էր Ամերիկայի Ներքին Պատերազմին մէջ:

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԴԻՐԲԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հաւատոյ հանգանակը, կամ դաւանանքը (creed) իր շիտակ առումով այն քրիստոնէական վարդապետութիւններու մէկ ամփոփումն է, որ ձեւուած է հեղինակաւոր նկատուած մարմիններու կողմէն: Ասոր երեք գլխաւորներն են. — (Ա) Առաքելական հանգանակ, որ Առաքեալներէն առնուած ըլլալով նախնական եկեղեցիի մէջ կը գործածուէր,

ինչպէս որ կը յայտնուի Հերանոսի (Irenaeus) զրութեանց մէջ: (Բ) Նիկիական հանգանակ, որ Նիկիոյ ժողովին մէջ, եօթը տիեզերական ժողովներէն առաջինին մէջ, 325 ին ընդունուած էր: (Գ) Աթանասեան հանգանակ, որ ընդունուած է 589 ին Սպանիոյ Թոլէտօ քաղաքը գումարուող Լատին ժողովին մէջ: Ասոնցմէ զատ կարգ մը

անհատներ, եկեղեցիներ, ժողովներ իրենց յատուկ հանգանակներ ունեցած են: Բողոքական յարանուանութիւններէն միայն ժողովական եկեղեցին է որ զրաւոր հանգանակ մը չունի, բայց ասիկայ չինչանակեր թէ ան՝ հանգակը չ'ընդունիր: Ժողովականութիւնը հանգանակը ընդունուած նկատելով գործի կ'սկսի. ինչպէս որ Եթիոփիլիքին մէջ «Աստուած» բառը չի գտնուիր, բայց Աստուած ինքը հոն կը յայտնուի: Ուրեմն՝ կ'արժէ աւսուսիւթեան առարկայ ընել այն հանգանակը, որ՝ ժողովականութիւնն ալ մէջը ըլլալով՝ բոլոր յարանուանութիւններուն հիմը կը գտնուի:

1. Պէտք է մոռնալ որ կեԱնՔի եՒ ՀԱՆԳԱՆԱԿԻ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՅԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ շատ բնական, տրամաբանական, կենսական և փոխադարձ է: (ա) կեանքը՝ պատճառ, հանգանակը արդիւնք է: Ինչպէս որ ուր որ կրակ վառի հոն լոյսն ու տաքութիւնը բնական կերպով կը գտնուին, նմանապէս ուր որ կեանքը կ'սկսի գոյութիւն առնել հոն հանգանակն ալ ծնունդ կ'առնէ: Քանի հոգեւոր փորձառութիւնը և մտաւոր տեսիլքը կը պայծառանան՝ ճշմարտութիւնները աւելի լստակ կը հասկցուին, և որչափ լաւ կը հասկցուին՝ այնքան ալ լաւ բանաձեւուած և իմաստալից բացատրութիւններով կը յայտնուին: Եւ երբ հանգանակը կատարելագործուելով հաստատուն ձեւ մը կ'առնէ անմիջապէս կ'սկիւր իր փոխադարձ ազդեցութիւնը ունենալ կեանքի վրայ: Այնպէս որ՝ չի գտնուիր կեանք մը որ հանգանակի մը՝ ծնունդ չտայ և իր արտադրած հանգանակէն չ'ազդուի: Անհեթեթ բան մըն է երեւակայել պատճառը առանց արդիւնքի, և արդիւնքը՝ առանց պատճառի: Կեանքը կատարելապէս սրտի կը պատկանի, իսկ հանգանակը՝ մտքի:

Բայց երկուքը միասնաբար անհրաժեշտ են ձեւաւորեալ քրիստոնէական կեանքի: Մենք հրաւիրուած ենք զԱստուած սիրել «բոլոր սրտէն» և միեւնոյն ատեն «բոլոր մտքէն»: Երբ հոգեւոր փորձառութիւնը անհասին սրտին մէջ գոյութիւն կ'առնէ, անմիջապէս անհատը կ'սկսի զայն ըմբռնել իր մտքովը, իմացական տարազով զայն արտայայտել, և ամէն ողջամիտ մարդուն զայն ներկայացնել: Ահա այս կ'ըլլայ անոր հանգանակը: Եւ հանգանակը կ'ըլլայ նաեւ բոլոր անոնց՝ որոնց մէջ նոյն փորձառութիւնը յառաջ եկած է, և որոնց մտքին նոյն բանաձեւը յարմար տեսնուած է: Այս կերպով այդ կրօնը կամ յարանուանութիւնը ծնած կ'ըլլայ: Իրականութեան և կարելիութեան սահմանէն դուրս է երեւակայել կրօն մը կամ յարանուանութիւն մը որ հանգանակ չունենայ:

(Բ) Միւս կողմէն հաւատքը՝ պատճառ, կեանքը արդիւնք է: Հաւատքը՝ որ հանգանակի հիմը կը կազմէ, յիշաւի կեանքէն յառաջ կուգայ: Ասոր համար էր որ մեր Տէրը «Աւետարանին հաւատացէ՛ք» ըսելով քարոզել սկսաւ, (Մր. 1. 15): «Անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու» (Յովհ. 1. 13): «Աստուծոյ հաւատացէք, ինծի ալ հաւատացէք . . . : Ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը գործնէ ես կը կատարեմ ինք ալ պիտի գործէ, եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ» (Յովհ. 14. 1, 12): «Ով որ հաւատայ թէ ի'նչ որ ըսէ կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր ի'նչ որ ըսէ» (Մր. 11. 23): «Այն ամէնը որ . . . ինծի կը հաւատայ յաւիտեան պիտի չ'մեռնի . . . եթէ հաւատաս Աստուծոյ փառքը պիտի տեսնես» (Յովհ. 11. 36, 40): «Եթէ կարող ես հաւատալ, ամէն բան կարելի է անոր որ կը հաւատայ» (Մրկ. 9. 28): «Եւ հոն հրաշքներ չ'ըրաւ անոնց

անհաւատութեանը համար» . (Մատթ. 13. 58) :

Այս և նման համարները կը ցուցնեն թէ նախ հաւատք կուգայ, և ապա՝ փրկուիլ, Աստուծոյ որդի ըլլալ, Աստուծոյ փառքը տեսնել, յաւիտենական կեանք ունենալ: Իսկ չհաւատալ կեանքը կ'արգիլէ: Արդ՝ որչափ որ շիտակ է թէ կեանքը յառաջ կը բերէ հաւատքը և հաւատոյ հանգանակը, նոյն քան ալ ճիշդ է թէ հաւատքը յառաջ կը բերէ կեանքը: Մէկը առանց միւսին չի կրնար գոյութիւն ունենալ. Աստուած զանոնք միացուցած է, մարդ չի կրնար բաժնել:

2. ՀԱՆԳԱՆԱԿԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՂԲԻԻՐԸ:

Հանգանակը ինկած քրիստոնեաներու կամ եկեղեցիներու կողմէ չէ հնարուած, անիկայ իր հիմնականին մէջ նոյն ինքն Յիսուսի և Առաքեալներու կողմէ պահանջուած, ուսուցում և դործածուած է: Յիսուս՝ մինչ իր աշակերտներովը Ծիլիպեան Կեսարիոյ գիւղերը կը շրջէր, ճամբան անոնց հարցուց. «Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Եւ Պետրոս պատասխանեց. «Դուն Բրիստոս ես. (Մր. 9. 23): Այսպէս առաջին անգամ Յիսուս էր որ հաւատամքը պահանջեց և զայն առաջին խոստովանողը եղաւ Պետրոս: Յիսուս ի ծնէ կոյրին աչքը բանալովը անոր նոր կեանք տուած եղաւ և ապա անոր ժողովարանէն արտաքսումը լսելով զայն գտաւ և ըսաւ. «Դուն Աստուծոյ Որդիին կը հաւատաս»: Եւ այն ալ, «կը հաւատամ Տէ՛ր», ըսաւ և Անոր երկրպագութիւն ըրաւ. (Յովհ. 9. 38): Այս զէպքին մէջ Յիսուսի բոլոր ըրածը՝ անոր կեանքը և հանգանակը իրարու հետ ներդաշնակելէ կը բաղկանար: Դարձեալ՝ երբ Ան Առաքեալները կը զրկէր բոլոր ազգերը Իրեն աշակերտ ընելու՝ հանգանակի բանաձեւ մ'ալ կուտայ անոնց: Անոնց հեղինակութիւն կուտայ մկրտե-

լու զանոնք որ կը խոստովանին թէ՝ «Հօր, Որդւոյն և Ս. Հոգւոյն անուան կը հաւատան»: (Մատթ. 28. 12):

Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Եթէ քու բերնովդ Յիսուսը Տէ՛ր խոստովանիս, ու քու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զանիկայ մեռելներէն յարուց, պիտի փրկուիս» (Հռոմ. 10. 9): «Բայց մենք մէկ Աստուած ունինք, Հայրը որմէ են ամէն բաները, և մենք ալ անով. ու մէկ Տէ՛ր Յիսուս Բրիստոս, որմէ են ամէն բաները և մենք ալ անով (Ա. Կորն. 8. 6): «Մէկ է մարմին ու մէկ՝ հոգի... մէկ՝ Տէ՛ր, մէկ հաւատք և մէկ՝ մկրտութիւն: Մէկ է Աստուած ու ամէնուն Հայրը, որ ամէնուն վրայ ու ամէնուն հետ և ձեր ամէնուն մէջ է... Որպէսզի մ'լ ասկէ ետքը տղաք չըլլանք, երեքսն ու վարդապետութեան ամէն հովիւրէն ասոյին անդին տարութեւն ունենան» (Եփս. 4. 4—6, 14): Իսկ երիտասարդ Տիմոթէոսի կ'ըսէ. «Զգուշացիր քու անձիդ և վարդապետութեանը, — միշտ անոնց մէջ կեցիր. քանզի այդպէս ընելով՝ քեզ ալ պիտի ապրեցնես, ու զանոնք ալ որոնք քեզի մօտիկ կ'ընեն» (Ա. Տիմ. 4. 16):

Իսկ Յովհաննէս Առաքեալ վճռական կերպով կ'ըսէ. «Ամէն հոգի որ Յիսուս Բրիստոսը մարմնով եկած կը խոստովանի Աստուծոմէ է — և այն որ չի խոստովանի Աստուծոմէ չէ» (Ա. Յով. 4. 2—3):

Ինչպէս որ գիտութեան պարտականութիւնն է զանազանել և զատաւորել խառն իխառն վիճակի մէջ գտնուող բնութեան իրերն ու իրականութիւնները, նոյնպէս ալ Բրիստոնէութիւնը պարտականութիւնն ու արտօնութիւնը ունի Յիսուս Բրիստոսի և Առաքեալներու ուսուցումներուն մէջ զոյց եղող պահանջները հաւաքել և կազմաւորեալ ձեւով աշխարհի ներկայացնել:

(Շարունակելի)

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

12. ՈՒՍՏԻ ԱՆ ՈՐ ԿՊՊՐԻ ՈՉ ԹԷ «ԵՍ»ԻՆ, ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ԿԵԱՆՔԻ ՀՕՐ ԿԱՄՔԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ ՊԻՏԻ ԶՄԵՌՆԻ

Յիզիքիական մահը իրեն հաւատ հօրը մե-
տաւէ հ :

Երբ Յիսուս աշակերտներուն հետ իր
խօսակցութիւնը աւարտեց, ելաւ՝ և հե-
տեւ փախչելու կամ ինքզինք ծածկելու
փոխարէն՝ գնաց ճամբուն վրայ, Յու-
զայի հանդիպելու համար :

Յիսուս հարցուց Յուզայի. «Ինչո՞ւ
եկած ես» : Յուզայ չպատասխանեց,
բայց խուճբ մը զինուորներ շրջապատե-
ցին Յիսուսը : Պետրոս յառաջ նետուե-
ցաւ իր ուսուցիչը պաշտպանելու հա-
մար, ու սուրը քաշելով սկսաւ կռուիլ :
Յիսուս սասանելով ըսաւ. «Ով որ սուրով
կը կռուի, սուրով կ'իյնայ» : Ու հրա-
մայեց սուրը պատահանը դնել : Ապա
դառնալով զինք բռնողներուն ըսաւ.
«Պատրաստ եմ, առանց վախճալու ձեզի
հետ գալու : Ըրէք, ինչ որ կը կամիք» :

Յիսուս առանձին մնաց. քանզի աշա-
կերտները փախան : Սպան հրամայեց
զԱյն կապելով քահանայապետին տանիլ :

Յիսուս ինքզինքը Հօրը կամքին մէջ
զգալով պատրաստ էր մեռնելու, ուստի
չընդդիմացաւ : Երբ զինք բռնեցին
չվախցաւ : Պետրոս վախցաւ և ուրա-
ցաւ զայն : Հաւաքն երեք անգամ խօ-
սելէն ետք միայն յիշեց ինչ որ Յիսուս
ըսած էր իրեն : Այն ատեն հասկցաւ՝
թէ մարդուն համար երկու փորձութիւն
կայ՝ վախ, և կռիւ, և թէ անոնց հետ էր
որ Յիսուս կը մաքառէր, երբ Գեթսե-
մանի մէջ կ'աղօթէր և կը խնդրէր որ
աշակերտներն ալ աղօթեն :

Պետրոս այս երկու փորձութիւննե-
րէն ալ պարտուած էր :

Յիսուս ո՛չ կռուիլ յանձնարարեց,
երբ աշակերտները յայտնեցին թէ եր-
կու սուր ունին և ո՛չ ալ վախ՝ Երու-

սաղիմի մարդոց առջև հեթանոսներու
հետ տեսնուելու ատեն, և հիմա ալ
զինուորներուն առջև, որ զինք կապած
գատարան կ'առաջնորդէին :

Յիսուս Կայիափայի առջև դատուե-
ցաւ, որը սկսաւ հարցնել իբր վարդա-
պետութեան վրայով : Յիսուս միայն
ըսաւ. «Ես ոչ մէկ բան պահած եմ և
ոչ մէկ բան կը պահեմ, իսկ եթէ կ'ուզէք
իմ վարդապետութիւնս գիտնալ, հար-
ցուցէք անոնց որ լսեցին ու հասկցան» :

Վերջապէս քահանայապետը հար-
ցուց. «Դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ
Որդին» : Յիսուս ըսաւ. «Այո, ես եմ
Քրիստոսը, Աստուծոյ Որդին : Զիս չար-
չարելով դուք պիտի տեսնէք, թէ Որդին
Մարգոյ ինչպէս նման է Աստուծոյ» :
Դատաւորները այս բառերը բաւ համա-
րելով մահուան դատապարտեցին : Ժո-
ղովորդը Յիսուսի վրայ յարձակելով,
կը թքնէր իր երեսին և կը նախատէր,
բայց Յիսուս լուռ կը մնար :

Հրեաները Զայն մահուան դատա-
պարտելու իրաւունքը չունէին : Ան-
հրաժեշտ էր Հռովմէական պետութեան
արտօնութիւնը առնել, ուստի Յիսու-
սը իրենց ատեանէն՝ նախատելով՝ տա-
րին Պիղատոսին : Պիղատոս պատճառը
հասկնալու համար, երբ հարց տուաւ,
ժողովուրդը պոռաց. «Վնասակար է» :
Պիղատոս շարունակեց. «Եթէ այդպէս է
կրնաք ձեր օրէնքով դատել» : «Մենք
մահուան կը դատապարտենք» պոռա-
ցին, «քանզի ան ապստամբ է կայսեր
դէմ» : Ան կը յուզէ ժողովուրդը, կ'ար-
զիլէ տուրքի վճարումը և ինքզինքը
Հրեաներուն թագաւորը կը կոչէ :

Պիղատոս Յիսուսը իր առջև կանչե-
լով հարցուց. «Ի՞նչ է ասոր նշանակու-

թիւնը: Դուքն Հրէից թագաւորն ես»
 Յիսուս պատասխանեց. «Կ'ուզե՞ս ճշ-
 մարտապէս զիտնալ իմ թագաւորու-
 թեանըս նշանակութիւնը, թէ ձեռի հա-
 մար կը հարցնես»: Պիղատոս շարու-
 նակեց. «Ես Հրեայ չեմ, ինձ համար
 նոյնն է կ'ուզես Հրէից թագաւոր կոչ-
 ուի՞ր, կ'ուզես ո'չ: Սակայն կը հար-
 ցընեմ. ո՞վ ես դուն և ինչո՞ւ քեզ թա-
 գաւոր կը կոչեն»: Յիսուս ըսաւ. «Ա-
 նոնք ճշմարիտ կը խօսին, քանզի ես
 ինքզինքս թագաւոր կոչեցի: Ես ար-
 դարեւ թագաւոր եմ, բայց իմ թագա-
 ւորութիւնս երկրային չէ, այլ երկնային
 է: Երկրի թագաւորները կը կոսեն ու
 կը պատերազմին, բանակներ ունին,
 կը տեսնես որ կը ծեծեն զիս, կապած են
 ու ես չեմ դիմադրեր: Ես երկնքի թա-
 գաւոր եմ, իմ ուժս հոգիէն է»:

Պիղատոս աւելցուց. «Ճշմարիտ է,
 որ ինքզինքդ թագաւոր կը կոչես»: Յի-
 սուս ըսաւ. «Դուն կ'ըսես: Ամէն ով որ
 հոգիով կ'ապրի ազատ է: Ես անով
 կ'ապրիմ և ես մարդոց կը վարդապե-
 տեմ այս ճշմարտութիւնը, թէ ամէն ոք
 հոգիով ազատ է»:

Պիղատոս նորէն ըսաւ. «Դուն ճշմար-
 տութիւնը կ'ուսուցանես, բայց ոչ ոք
 գիտէ, թէ ի՞նչ է ճշմարտութիւնը և ա-
 մէն ոք քիչ ճշմարտութիւնը ունի»:

Այս ըսելով կռնակը դարձուց Յիսու-
 սի և գնաց Հրեաներուն և ըսաւ. «Ես
 այս մարդուն վրայ յանցանք մը չեմ
 տեսներ: Ինչո՞ւ մեռցնենք»:

Սակայն Փարիսեցիները պահանջեցին
 որ Ան մեռցուի:

Պիղատոս նորէն Յիսուսը քննել ու-
 զեց քահանայապետներու ներկայու-
 թեան, բայց Յիսուս գիտնալով թէ
 սոսկ ծաղրական հարցութորձ մ'է, ա-
 չինչ չպատասխանեց: Պիղատոս մտա-
 ծելով յայտնեց, թէ «ես առանձինն չեմ
 կրնար դատապարտել, Հերովդէսին
 տարէք»:

Հերովդէսին դատարանին մէջ ալ
 Յիսուս չպատասխանեց քահանայա-
 պետներու ամբաստանութիւններուն:
 Հերովդէս Յիսուսը ցած մէկը համարե-
 լով հրամայեց որ ծաղրանքի համար
 կարմիր հագնուտ մը հագցնեն և Պիղա-
 տոսին տանին:

Պիղատոս խզճալով սկնաւ համոզել,
 որ ներեն Յիսուսի, իբր տօնի յար-
 գանք: Սակայն քահանաները չհա-
 ւանեցան, այլ ժողովուրդին հետ պո-
 ռացին. «Թող լնաչուի Դրիստոսը»:
 Պիղատոս նորէն ջանաց համոզելու ար
 Յիսուսը արձակել, բայց կրկին պոռա-
 ցին. «Մաչ հանէ զայն, քանզի ինք-
 զինք Աստուծոյ Որդին կոչելուն հա-
 մար յանձար է»:

Պիղատոս կրկին հարցուց. «Ի՞նչ կը
 նշանակէ Աստուծոյ որդի կոչուիլ»:
 Յիսուս լռեց:

Պիղատոս շարունակեց. «Ինչո՞ւ չես
 ուզեր պատասխանել, քանի որ ես կա-
 ռող եմ սպաննել կամ ազատել»: Յիսուս
 պատասխանեց. «Դուն իմ վրայ իշխա-
 նութիւն չունիս, Իշխանութիւնը վե-
 րէն է»:

Պիղատոս երրորդ անգամ աշխատե-
 ցաւ Յիսուսի ազատման համար, բայց
 ժողովուրդը պոռաց. «Անիկա կայսեր
 թշնամի է. եթէ չդատապարտես, կայ-
 սեր բարեկամը չես»:

Պիղատոս այս խօսքերը լսելով հրա-
 մայեց Յիսուսը սպաննել. ու ինք հեռա-
 ցաւ:

Նախ մերկացուցին ու գանակոծե-
 ցին Զայն, յետոյ ծաղրական ձեռով
 հագուեցուցին, ապտակեցին, ծաղրեցին
 ու նախատեցին: Վերջապէս խաչը զը-
 րին ուսին և առաջնորդեցին զխառ-
 ման տեղը ու խաչեցին:

Երբ Յիսուս խաչէն կը կտրուէր,
 ծաղրուեցաւ ժողովուրդէն: «Հայր թո-
 դութիւն տա՛ւ անոնց, ինչու որ չեն
 գիտեր, թէ ի՞նչ կ'ընեն»: Ու երբ

ՔԱՆԻ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔԵՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԵԱՆ ՇՐՋԱՆԻ

(1—6 ՏԱՐԵԿԱՆ) ՄԱՆՈՒԿԻՆ ՄԱՍԻՆ*

Լաւ ըստած է թէ մանուկ մը կրթել ազգ մը կրթել է: Մանուկը կրթելու գործին մէջ յաջողելու համար լաւագոյն պայմաններէն մէկն է հասկնալ մանուկը, սերտել անոր բնութիւնը և պահանջները:

Զխորհինք թէ 1—6 տարեկան եղող մանուկը բաղդին ձգտելով պէտք է մեծնայ և թէ այդ տարիքը իր սորվելու ատենը չէ: Իր կեանքին բուն ուղղութիւնը ան ատեն կ'սկսի: «Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի»:

Ա. մանուկը կը սիրէ խաղալ: Պէտք չէ անարգել մանկան խաղը: Յայտնի է թէ ատ Աստուծոյ ծրագիրն է մանուկին աճման համար: Ուրիշ կեանքի պատրաստութիւն մըն է:

Ի՞նչ է արդէն խաղին և գործին տարբերութիւնը: Ուրիշ մը մէկուն համար հաճոյքի և զբօսանքի միջոց մըն է, մինչդեռ նոյնը ուրիշի մը համար լուրջ գործ մըն է: Այս երկուքին իրարմէ տարբերութիւնը քու անոնց հանդէպ ունեցած դիրքէդ կախում ունի: Մանուկի համար խաղը հաճոյք մըն է. բայց իրականութեան մէջ անիկայ գործ մը և ապագայի պատրաստութիւն մըն է: Եթէ մանուկը ձանձրացուցիչ գործ մը նկատէր իր շարժումները, երբէք պիտի չխաղար: Անիկայ խաղալով անգիտակցաբար շինիչ մարդանք մը ըրած կ'ըլլայ:

Մանուկը խաղալով կը սորվի գործ-

ծել: Դիւրութեամբ կարելի է նշմարել այս կէտը երբ դիտենք իր պուպրիկով խաղացող աղջիկ մը, կամ խաղի մէջ խանութպան, ուսուցիչ եղող կամ տուն շինող տղայ մը:

Այս տարիքին պատկանող ոնէ մանուկ խաղին մէջ ամէն բանէ աւելի շարժում կ'ուզէ: Ուրիշներու խաղալը դիտելով չի գոհանար. ինք անձամբ կ'ուզէ խաղալ: Ուրիշ օրէնքներն ալ զինք չեն հետաքրքրեր այլ՝ գործունէութիւնը, շարժումը: Յաճախ առանձին կը խաղայ, և եթէ երբեք խումբի մը մէջ գտնուի, ինքզինքը խաղին հերոսը կ'երեւակայէ և ուրիշները իրեն համար օգտագործել կը ջանայ:

Ծնողներ մեծ դեր ունին մանուկին խաղալիքներուն տեսակը որոշելու մէջ: Ուրիշներէն կարելի է չափով մը նեւթագրել մանուկին ապագան, և նոյն պէս իր ծնողներուն տեսակը: Քանի որ խաղը գործի պատրաստութիւնն է ուրեմն խաղալիքն ալ մանուկին գործին տեսակը կ'որոշէ, և գործելակերպը կը շինէ: Այնպիսի խաղալիքներ տանք որ թէ՛ հրապուրիչ և թէ՛ շինիչ ըլլան, որոնք կարգալու և զրելու պէս օգտակար բաներու իսկ կրնան ճամբայ բանալ:

Ծնողքներ խաղի միջոցաւ կրնան պղտիկը համագործակցութեան վարժեցնել: Առաջնորդել պէտք է մանուկը որ ուրիշներու հետ խմբական խաղեր խաղայ, որով ան հաճոյք գտնելէ զատ իր մէջ կանուխէն գործակցութեան ոգին պիտի մշակէ:

մահուան մօտեցաւ ըսաւ. «Հայր, հորի» քեզի կը յանձնեմ»:

Եւ զլուխը ծռելով շունչը տուաւ:

—ՎԵՐՋ— Թրգմ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

*Այս գրութեան մէջ մեծապէս օգտուած եմ WEIGLE'S 'THE PUPILS AND THE TEACHER' և THOM'S 'EVERYDAY PROBLEMS OF THE EVERYDAY CHILD' գիրքերէն:

Այսպէս խաղն ու խաղալիքը պզտիկին համար էական, չինիչ և անհրաժեշտ բաներ են, պայմանաւ որ անոնք ծնողներու հսկողութեամբ ըլլան:

Բ. Մանուկը հետաքրքիր է: Ծնողներ կրնան օգտագործել մանուկի այս բնագիւղ: Մանուկը միշտ կը հարցնէ ինչո՞ւ, ո՞վ, ի՞նչպէս իր մեծերուն: Ան իր լսած և տեսած ամէն բան կ'ուզէ գիտնալ և հասկնալ: Այս պատճառաւ հարցումներու թիւը երբեմն այնքան կը շատնայ որ ձանձրացած մայրը ա'լ չ'ուզեր շիտակ և լման պատասխան տալ, կամ կը յանդիմանէ զայն և կամ կը ստէ: Բայց ասիկայ վտանգաւոր է: Բանդի այս կերպով մանուկին զգացումները կը վիրաւորուին և իր հետաքրքրութիւնը գոհացում չստանալով կրնայ տկարանալ, և կամ սխալ գաղափարներով իր միտքը կը լեցոնի որ նախապաշարումներու դժուարափոխ հաւաքածոյ մը կը գառնայ:

Պզտիկ մը հարցոց իր մեծ մօրը, երկրաշարժէ մը վերջ՝ թէ ինչո՞ւ տունը շարժեցաւ: Պատասխանը առնելէն յետոյ մօրն ալ հարցոց, և երբ իրարմէ անտեղեակ այս երկուքին պատասխանները չհամաձայնեցան, պզտիկը ըսաւ. «Մամա ինչո՞ւ երկուքդ նոյն պատասխանը չէք տար»: Մանուկը հարցումներով կ'սկսի իրեն զիտութիւն ամբարել: Օգտագործէ իր հետաքրքրութիւնը:

Սովորական գիտելիք մըն է ամէնուն համար թէ մանուկը ընդօրինակող մըն է, բայց զգոյշ պէտք է ըլլանք որպէսզի մեր կեանքը և խօսքը զիրար չհակասեն: Ինչ որ կուզենք որ անոնք կատարեն նոյնը մենք խօսինք և գործենք: Մանուկը յաճախ մեր երեսին կը զարնէ մեր հակասութիւնը հարցնելով՝ «հապա ինչո՞ւ հայրիկը, կամ եղբայրը, ճիշդ իմ ըրածս ըրաւ»:

Գ. Մանուկը վառ երեւակայութիւն

ունի: Ան գրեթէ ամէն բան կ'անձնաւորէ, փայտի կտոր մը՝ մարդ, գաւազան մը՝ ձի, չուանով կապուած կտոր մը քարը՝ կառք կ'ենթադրէ: Այս երեւակայութիւնը այնքան յառաջ կը տանի ան որ յաճախ կենդանի և անկենդան մարմիններու մէջ գանազանութիւն մը չի կրնար դնել: Տարբերատեններ ինքզինքը տարբեր բաներ կը ձեւացնէ և իրապէս ալ ասոր կը հաւատայ:

Բայց մանուկը չի կրնար յաճախ զանազանել իրականը և կեղծը, ճշմարիտը և երեւակայութիւնը: Շատ անգամ երազներ իրեն համար իրական դէպքերէ չեն տարբերի: Մանուկ մը կուլար առտու մը. երբ պատճառը հարցուեցաւ, ըսաւ. «Քեռիս եկաւ բայց հիմայ չկայ»: Երազ էր: Ինչ որ մենք երբեմն կը դատապարտենք, պզտիկը սուտ խօսած ըլլալուն համար, անիկայ ուրիշ բան չէ եթէ ոչ անոր հաւատքը թէ իր երեւակայածը կամ երազածը իրապէս պատահած բաներ են: Մանուկը այսպիսի պարագաներուն չի ստեր այլ կը սխալի: Ասոր համար այսպանելու չէ գինքը բայց խոհմութեամբ վարուելու է իր հետ: Լաւ չէ անոր ըսել թէ սուտ կը խօսիս, և այսպէսով վիրաւորել իր պարկեշտ ճշմարտութեան սուրբիւնը և անկեղծութիւնը: Անխուհեմ վարմունք կրնայ զայն զիտակից սուտերու առաջնորդել:

Չափահասներու մէջ իսկ երեւակայութիւնն է որ ընդհանրապէս զիտերու կ'առաջնորդէ: Պզտիկը ունի այս ստեղծող եւ չինիչ երեւակայութիւնը որ իրեն միշտ պէտք է և որ պէտք է անվնաս պահուի:

Դ. Մանուկը կը սիրէ պատմութիւնը: Մանկան այս յատկութիւնը օգտագործել ամբողջութեամբ իր մեծերուն ձգուած է: Իր մեծը իրեն ինչ որ պատմէ իր մտքին վրայ այդ պիտի տպուոր-

ուի: Հետեաբար անոր տեսակը որոշելու մէջ քու առողջ դատողութիւնդ պէտք է գործածել:

Մանուկը կը սիրէ այն պատմութիւնները որոնք պարզ են, և խօսքէ աւելի շարժումներէ կը բաղկանան:

Վախ կամ քաջութիւն, ատելութիւն կամ սէր, բարեկամական ոգի կամ թշնամութիւն եւ այլն կրնան պատմութիւններէն ծագում առնել: Երբ պըզտիկ հասակիս մէջ ինծի Արրահամի և Իսահակի պատմութիւնը պատմէին, շատ կը վախնայի, և երբեք չէի ուզեր որ հայրս կամ մայրս Արրահամի չափ և իրեն պէս աստուածապաշտ ըլլան, որ չըլլայ թէ օր մըն ալ իրենք զիս այդ Աստուծոյն ողջակէզ մատուցանեն: Պատմութիւնը մանուկին ծանօթութիւնը կը ճոխացնէ, անոր երեւակայութիւնը կը բոցավառէ, անոր նկարա-

զիրը կը կերտէ:

Ի. Մանուկը բաց է թելադրութեանց: Ան աշխարհ եկած օրէն սկսեալ ազդեցութիւն կ'ընդունի իր շուրջիներէն: Իրեն համար անկարելի է ամէն բան իր նահատական փորձառութիւնով սորվիլ, ամէն բան իր խորհելովը սորվիլ: Կը հաւատայ ինչ որ ըսես իրեն:

Այսպէս, մանուկը իրեն տրուած տեղեկութեանց և բացատրութեանց անկեղծօրէն բաց է: Մանուկին սխալ գաղափարներէն բաւական մէկ մասը իր ծնողներուն վերազրուելու է:

Սխալ մեկնութիւն մը մի՛ տար մանուկին: Պարկեշտութեամբ կրթէ զայն: Իր հասկնալու կարողութեան չափով ճշմարտութիւններ տուր իրեն: Մեղի հանդէպ իր ունեցած վստահութիւնը չարաչար մի՛ գործածեր:

Արեւի

Ս. Գ. ՍԻԻԼԱՀԵԱՆ

ՈՒՐԱՐՏԱՅԻՓ

(Շարունակութիւն թիւ 9 հն)

Ն. Ք. 784-783 թուականին, Ուրարտուի գահը բարձրացաւ Բ. Արգիշտիի կամ Արգիստիս անուն քաջ և ռազմագէտ արքայ մը: Այս մեծանուն անձը Արարատեան պետութեանց Մեծն Ազիքսանդրը կամ Կեսարը անուանուելու արժանի է: Իր երկարամեայ թագաւորութեան միջոցին 12 պատերազմներու վերին հրամատարութիւնը ստանձնեց և ամէնուն մէջ յաղթական եղած է: Այս ռազմական արշաւանքներէն երկուքը Արարատեան Դաշնակցութեան գրծող և Ուրարտուի գերիշխանութիւնը չճանաչող Մաննի և ասոնց նման պըզտիկ տերութիւնները պատժելու և Արարատեան Դաշնակցային Պետութիւնը աւելի հաստատ հիմքերու վրայ դնելու նպատակաւ կատարուեցան: Միւս 5-6

պատերազմները Ասորիստանի Ինքնակալ Սաղմանասար Ե. ի դէմ մղուած արշաւանքներ էին: Այս ռազմական գործողութիւններու մէջ Արգիստիս Ա. նինուէի գոռոզ միապետներու մահացու հարուածներ տուաւ, այս հինաւուրց Ասիական Գերմանիայի ձեռքէն ոչ միայն անթիւ գերիներ, անասուններ և թանկագին անօթներ առաւ, այլ խոշոր հողամասեր խլելով իր բարգաւաճ տերութեան կցեց և Ասորիստանը երկրորդ աստիճանի վերածեց: Նինուէի զինագետը կամայ ահամայ ճանչցաւ անոր առաջնութիւնը: Մնացեալ արշաւանքները Կովկասեան Լեռնազոտիին, Սիւ Ծովու, Կասպից Ծովու և Հիւսիսային Պարսկաստանի մէջ երկիրներ նուաճելու համար կատարուեցան,

այնպէս որ Արեւելեան Անատոլիոյ աշխարհի գահակալութեան ժամանակ՝ Ուրարտուի սահմանադրւելներն էին հիւսիսէն՝ Կովկասեան Հեռները և Սեւ Մովու եզերքը, Արեւելքէն՝ Կասպից Մովու տափաստանները և Պարսկաստան, Հարաւէն՝ Նինուէի մօտակայ գաւառները, և Արեւմուտքէն՝ Կապադովկիայի բարձր գաշտերը:

Արարատեան աշխարհագրական Սիստոսերեսը իր բոլոր կեանքը ռազմադաշտերու մէջ չանցուց և իրամբողջ ժամանակը միայն երկիրներ նուաճելու համար չյատկացուց, այլ իր թագաւորութեան նահանգները շէնցնելու, գիտութեանց, արհեստներու և բարձր արուեստից զարգացման համար մեծ ջանքեր ըրաւ: Այնպէս որ Ուրարտական Պետութեան բոլոր գաւառները զարգացող հոյակապ կռատուններով, տաճարներով, անառիկ բերդերով, ըստորերկրեայ ճամբաներով, ջրուղիներով և պատմական արձանագրութիւններ կրող բարձր կոթողներով: Վաճառականութիւնը իր բարձր գաղաթնակետին հասաւ այս յաղթապան թագաւորին օրով: Մէկ խօսքով բաղդի և երջանկութեան արեգակը 50 տարի կայնեցաւ զէնիթի վրայ:

755 (Ն. Ք.) Արգիստիս Ա. մեռաւ և իր որդին Սարգուրիս Գ. անոր տեղը թագաւոր հռչակուեցաւ: Ասոր ինքնակալութեան առաջին օրերը, Ուրարտուի հպատակ փոքրիկ տէրութիւնները ապստամբեցան՝ լսելով որ Յաղթողն Արգիշտի Վախճանած էր: Սարգուրիս Գ. հռչակու ձեռքերով այս բոլոր անհնազանդ արքայիկները զսպեց հպատակութեան լուծին տակ: Յետոյ հիւսիսային Սուրիոյ մէջ գտնուող և Ասորեստանեան ծանր իշխանութենէն զրգոյժ ժողովուրդներուն օգնութեան համար հոն արշաւեց: Այս անգամ իր զինամը Գաւառ քաղ ռազմավար, հանձա-

րեղ, մանաւանդ դաշտային պատերազմներու մէջ փորձառու միապետ-ը Սարգապետ Գ. Դիկղատ Բաղասարը 745 ին (Ն. Ք.) պատերազմը կ'սկսի, որուն միջոցին Սարգուրիս Գ. 730 հազար զինուոր կը կորսնցնէ. ռազմամթերք և մեծաքանակ պաշար ևայլն թողլով շատ թշուառ և խայտառակ վիճակի մէջ կը փախչի իր երկիրը և Միջագետքի և Փոքր Ասիոյ մէջ առաջնութիւնը նորէն կ'անցնի Ասորեստանի ինքնակալին բուն:

Ասկէ անդին պատմութիւնը չպիտի երկարեմ, վերոյիշեալ ազեպէն վերջը Բուսաս Ա. Բուսաս Բ. եւ ուրիշ քանի մը իմաստուն, խոհեմ և վարչագէտ արքաներու ջանքերուն շնորհիւ Ուրարտու նորէն իր ազգային գոյութիւնը, անկախութիւնը և այն դարու մեծ պետութիւններու շարքին մէջ իր պատկառելի դիրքը պահեց: Բայց այս երկու անհնաւատեա տէրութիւններու անհաշտ եւ ոխերիմ թշնամութիւնը եւ թունալից նախանձը իրենց սրտին մէջ պահելով իրիւրաւեր պատերազմների շարունակեցին այն սատիճան՝ որ վերջապէս երկուքն ալ ուժասպառ եղան: (Ն. Ք.) 645 ին Մարաց Թագաւորը Արարատեան երկիրները նուաճեց և արիւական ժողովուրդներու մուտքին եւ տեղաւորման ճամբայ բացաւ: Ասկէ ետքը Սիմերեանք հարաւ. արեւմտքէն, Սկիւթացիք եւ Շակեր հիւսիսէն գալով սկսան տեղաւորուել Արարատեան երկիրներու մէջ եւ գանոնք նեղիլ և իրենց մէջ ձուլիլ Ուրարտացիները: Նոյն ատենները իջան եւ տեղաւորուեցան Էրոպական — արիւական Հայեր որ երկար ժամանակէն ի վեր Փռիւզիոյ մէջ մնացած էին առանց ձուլուելու: Այս վերջինները Արարատեան երկիրներու կարեւոր մասերը նուաճելով ուժասպառ Ուրարտուի վրայ արիւական տէրութիւն մը հաստատեցին:

Ուրարտացիներու կարեւոր մէկ մասը անոնց մէջ խառնուելով ձուլուեցան: Մենք Հայերս եւ Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Ռուբինեան ժամանակաց մեր նախահայրերը Հայ արիական — Ուրարտական ձուլումի վաւականներն ենք: Բայց ըստ ազգաբանական գիտութեան օրինաց մենք Ուրարտական խաղիական ազգ մը չենք այլ Եւրոպական — Արիական ազգ մը ենք: Այսու ամենայնիւ նորարարող այս հայկական ներքնապէս ազատ տէրութիւնը կարճ ժամանակի համար Մարաց եւ բաւական երկար ժամանակի համար Կիւրոսներու եւ Դարեհներու միապետութեան զերիշխանութիւնը կը ճանչնար եւ կը վայելէր:

Արիական Հայերու գաղթէն եւ տե-

ղաւորումէն յետոյ Սալդեաններու մեծ մասը Արաքս գետին հովիտը եւ լեռները քաշուելով երկար ժամանակ իրենց զուտ ազգային գոյութիւնը, աւանդութիւնները եւ սովորութիւնները պահեցին: Տրապիզոնի հարաւային կողմը, մինչեւ 20 ըզ դարու առաջին տարիները «Սալիտներ» անունով յիշ մը, փոքրիկ ժողովուրդ մը կ'ապրեր, որոնք Սալդեաններու (Արարատեան երկիրներու) մնացորդ է. եւ մինչեւ Թրքո-Հէլլէն պատերազմը Կիւմիւշխանէի մէջ Սալդեանի Յոյն Եպիսկոպոսութիւնը կանգուն մնացած էր: Բայց հիմա ուր մնաց չեմ գիտեր, բայց Կիւմիւշխանէի եւ Բաբերդի մէջտեղ իսլամ Սալդիներ հիմայ կ'ապրին:

(Շար.) Կ. ԳՈՒՆՏԱԳՃԵՍՆ

ԲԱՆՏԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՅՈՒԻՆ

Նիւ-Եորք նահանգի գերագոյն ատենին դատաւորը պատմիկներու կրօնական դատարարութեան կարեւորութիւնը կը շեշտէ՝ իր 23 տարուան փորձառութիւնը պատմելով:

Դատաւոր Լուիզ Ֆալսէթ՝ Նիւ-Եորքի Ս. Գրքի Ընկերութեան քարտուղար Տր. Ճ. Քարթլըրի գրած մէկ նամակին մէջ (որ Քրիսչըն Օպզըրվըր Երիցական Եկեղեցւոյ թերթին մէջ տպուած է) սապէս կ'ըսէ. «Դատաւորական պաշտօնավարութեանս 23 տարիներուն միջոցին 21 տարեկանէ վար 4000 է աւելի տղայք իբր ոճրագործ դատապարտուեցան, որոնցմէ միայն երեքը Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտ եղած էին. որով համոզուեցայ թէ Կիրակնօրեայ Դպրոցի օգուտը ժողովուրդին վերայ իբր պահապան հրեշտակ խիստ մեծ է: Կիրակնօրեայ Դպրոցներու տարածութեան համեմատ ոճիւններ կը պակսին: 1902 ձերբակալեալներ ոճիրի

վճիռէն ազատ արձակեցի՝ անգամ մ'ալ չընելու համար պատուոյ խօսք առնելով անոնցմէ. ու իմ մասնաւոր փափաքովս զանոնք յանձնեցի քարոզչի մը, կամ քահանայի, կամ հրեայ բապտիստ մը հոգատարութեան: Ասոնցմէ միայն 62ը կրկին դատարան ետ եկան: Եւ վստահ եմ թէ անոնցմէ 1500 էն աւելին բարեփոխուեցան անմիջապէս եւ տեւականօրէն:

«Հետեւաբար ակներեւ է թէ Կիրակնօրեայ Դպրոցները, ինչ դաւանանքի ալ վերաբերին, միակ ազդեցիկ միջոցներն են պատանիներու մէջ տակաւաճող չարութեան ու ոճրագործութեան ծառը արմատախիլ տապալելու համար: Ընկերութիւնը կը տանի ոճրագործութեան ծանր ծախսի լուծը, որուն գլխաւոր պատճառն է պատանիներու կրօնական կրթութիւնէ զուրկ մնալը:

«Եթէ բոլոր տղաքը Կիրակնօրեայ Դպրոցի ազդեցութեան տակ պահել կա-

րենայինք, ու մեծցողները եկեղեցիի մը մէջ գործօն պահուէին, մենք մեր ԲԱՆՏԵՐԸ ՊԻՏԻ ԳՈՅԷԻՆՔ՝ փոխանակ զանոնք ընդարձակելու և անոնց թիւը աւելցնել ստիպուելու:

«Պատանիներու խնդիրը մարդասիրութեան խնդիր է: Այս երկրին մէջ 17,000,000 աղաք ու աղջիկներ կը մեծնան առանց որեւէ կրօնական կրթութեան (Բողոքական, Կաթոլիկ, Կամ Հրեայ):»

«Կը մաղթեմ որ, աղայոց զԱստուած սորվեցնելու ձեր սիրոյ զործը բազում պտուղներով արդիւնաւորուի, որ անոնք փրկուին և զաւիք տարիներու մէջ Աստուծոյ ծառային:»

Կրօնական կրթութեան արժէքին անժխտելի ապօքոյցը մէջ տեղը ըլլալով զարմանալի չէ՞ որ դեռ կան ծնողներ որ այս կենսական խնդիրը զանց կ'ընեն թէ՛ տան մէջ և թէ՛ եկեղեցիին մէջ, ու չեն կրնար հասկնալ անոր օրհնութիւնները և հակառակօրէն զիրքեր կ'առնեն անոր շնորհներուն հանդէպ:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Անցեալ ամիս Մակելլանի միգամածին մէջ գերհսկայ աստղ մը գտնուեցաւ, որուն փայլունութիւնը արեւէն 12 հազարէն մինչեւ 33 հազար անգամ աւելի է: Այս միգամածը, որ աշխարհէս 90 հազար լոյսի տարիի հեռաւորութիւն ունի, այսպիսի հարիւր հազար աստղեր կը պարունակէ:

Այս տեսակ պայծառութիւնը փոփոխելի վիթխարի աստղերէն զիտուններ կ'ըմբռնեն ծիրկաթիններու կազմուածքը, աստղերու փայլունութեան աստիճանը և անոնց հեռաւորութեան չափը:

Կ. Պոլսոյ մօտ՝ ծովեզերքը՝ քարայրներու մէջ պահուած է պակածանի (mas-

todon) կոչուած ցիզը անցած տնասունի ակռաները, ժանիքները և կմախքի կտորները:

Բժիշկ մը իր քսան տարուան փորձառութենէն յետոյ կ'եզրակացնէ թէ՛ մորթախտի (Pellagra) հիւանդութեան գլխաւոր ազդակներէն մին գլխեմոլութիւնն է և երկրորդ՝ անպատշաճ կերակուրներու սնունդը: Այս հիւանդութիւնը յառաջ կուգայ երբ մարմնի մէջ կենսամիւն (D) կոչուած նիւթը կը պակսի: Այս կենսամիւնը կը գտնուի միտի, կաթի, հաւկիթի, մակարիկի և կարկ մը բանջարեղէններու մէջ:

Մերձ. Արեւելքի և հարաւային Ռուսիոյ մէջ սովորութիւն էր՝ պետի մը մահուան առթիւ իր ազգականներն ու ծառաներն ալ մեռցնել որպէսզի հանգերձեալ աշխարհին մէջ իրեն հետեւորդ ըլլային:

Յարգ կը կարծուէր որ այս սովորութիւնը Եւրոպայի մէջ գոյութիւն չունէր. բայց Աւստրիոյ մէջ կատարուած վերջին պեղումները կը յայտնեն որ պղնձի դարուն Եւրոպայի մէջ կար այս սովորութիւնը:

Ակռայի փտութեան սռաջքը կըրնայ առնուել երբ յարմար կերակուրներով անհատը սնուցուի: Միշիկընի համալսարանին մէջ փորձ կատարուեցաւ երեք խումբ աշակերտաց վրայ: Առաջին երկու խումբերու կերակուրներուն մասնատր ուշադրութիւն չարուեցաւ, որով տարուան մը ընթացքին անոնց ակռաները սկսան փափլ: Իսկ երրորդ խումբը մասնատր կերակուրներով սնուցուեցաւ և տարի մը վերջ տեսնուեցաւ որ ակռաները վերժ էին փտութենէ:

Տեսակ մը նոր կեդրոնախոյս ոյժով գործող մեքենայ մը շինուած է, որուն շուրթը երեք անգամ աւելի ուժգին կ'ընթանայ քան հրացանէ մը արծակուած փամփուշտը: Մեքենային շուրթը մանրերկրորդի մը մէջ 10000 ոտք արագութեամբ կը գառնայ: Ասոր հնարիչները կը յայտնեն թէ իրենք արտագրած են կեդրոնախոյս գորութիւն մը որ ձգողութեան գորութեան միջոցով անդամին հաւասար է: Այս մեքենաները գիտական աշխատանքներու և գործարաններու մէջ կը գործածուին, խառնուած կամ միացած առարկաները արագօրէն իրարմէ զատելու համար:

Պղինձի դարուն վերաբերեալ քաղաքի մը աւերակները գտնուեցան Մեռեալ Ծովուն մօտերը: Կը կարծուի թէ 4500 և կամ 4000 տարուան հնութիւն մը ունի: Փլատակներու տակէն դուրս հանուեցաւ արծառագրութիւն մը որ մեծ աղէտի մը պատմութիւնը կը պարտնակէ: Ուրիշ քաղաք մ'ալ երեւան ելաւ որուն աւերակներուն վրայ շինուած է աւերեալ երկրորդ քաղաքը:

Վերջերս միջատաբանները անտառներուն մէջ աւեր գործող միջատները սկսան բնաջնջել ուղղակի արեւի ճառագայթներուն ենթարկելով գանոնք:

Երուսաղէմի Հրէական համալսարանէն Փրոֆ. Ահարոնի Սուրիոյ անապատներուն մէջ արշաւանք մը կատարեց հազուագիւտ կենդանիներու և թռչուններու նմոյշներ գտնելու: Հոն գտաւ և կրցաւ բռնել ջայլամներ որոնք 70 մղոն կը վազեն մէկ ժամուան մէջ:

Մոնկոլիայի մէջ Հոներու (Huns) 150ի չափ գամբարաններ գտնուեցան որոնք երեսոսէ շինուած են:

Միջագետքի մէջ Բ. Ա. 2750 թուականէն մնացած նարտի քուէներ զանուած են թրծուն կաւէ շինուած:

Անցեալները նոյն երկրին մէջ նարտի տախտակ մը գտնուեցաւ որ 3000 ն. Բ. թուականին կը պատկանէր:

«ՐԱՀՆԻԻՄԱԻ» ԹՂԹԱԿՑԻՆ ՄԷԿ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Տէ՛ր խմբագիր,

«Նոր Աւետարելի» ի թիւ 13 ին մէջ հրատարակուած Վեր. Ս. Ս. Մանուկեանի նամակը կարգացի, որ գրուած էր «Բահնիմայի» թղթակցին մի քանի խօսքերուն մասին: Այդ խօսքերն էին հետեւեալը. Համբարձումեանի մասնախումբին գործողութեանց մասին ըստուած էր. «Իցիւ թէ այդ Պատ. մասնախումբը աւելի լայնամտութիւն, աւելի համբերութիւն ցոյց տար: Պէտք չէ մոռնանք որ վարդապետական հակաճառութեանց նորոյթը անցնելու վրայ է»:

Վեր. Նամակագրին այս գրութեան մէջ բուն շարժառիթը կամ շարժառիթները ի՛նչ են մեզի մոտ իր մնան: Արդեօք նպատակը վերստին արժարժե՞լ է Համբարձումեանի հարցը օր քչիկ մը խաղաղած ըլլալ կը թուէր: Եթէ այսպէս է, կը կարծենք որ այս իմաստուն և շինարար գործ մը չէ: Այնպէս կը կարծենք որ այս խնդրին մասին պէտք եղածէն աւելի գրուած և խօսուած է արդէն: Ասկէ աւելին ո՞նէ բարիք չ'առաջարկեր:

Եթէ Վեր. Մանուկեանի նպատակը Միութեան ծանօթ մասնախումբը պաշտպանել է, կը փափաքեմ կարճ կերպով հետեւեալ կէտերուն անոր ուղադրութիւնը հրաւիրել: Մենք միահնիւմ մէջ ըսած էինք թէ սիցիւ թէ

այդ Պատ. մասնախումբը աւելի լայնամասշտաբիւն և համարեութիւն ցուցնէր»։ Այս ըսելու տտեն մեր աչքին առջեւ ունէինք այս խնդրին մէջ ընթացք առնող ընդհանուր գործողութիւնը, և ոչ՝ մասնաւոր դէպք մը։ Զոր օրինակ, մեր աչքին առջեւ չունէինք մասնախումբին յանգած որոշումը, որ կը կարծենք թէ միայն երկրորդական կամ երրորդական կարեւորութիւն ունէր։ Ընդհանուր գործողութիւն ըսելով կը հասկընանք խնդրին այն փուլերը որոնց մէջէն անցաւ ան՝ Միութեան ժողովին ներկայացուելէ առաջ, քննիչ մասնախումբին կազմութեան կերպը, էականին մէջ աշխարհական տարրին անկէ բացակայութիւնը և միայն վերջին օրերուն բուն քննութեան գործը լմննալէն հաջորդ նոյն մասնախումբին մէջ աշխարհականներու դժգոհութեամբ ընդունուելը, քննութեան կատարուելու կերպը, իմաստը ճիշդ չհասկցուող որոշումը, որոշումը յայտնելու համար մասնախումբի անունով կատարուած կարգ մը արարքները։ Միութեան ժողովէն հաջորդ տեղի ունեցող կարգ մը դէպքեր մեր այս զգացումը ա՛լ աւելի հաստատեցին։ Մեծապէս կը յարգենք ամէն մէկ անդամը այդ ժողովին որուն մասնակցեցայ վերջին երկու օրերուն մէջ, և վստահ ենք որ այսօր անոր անդամներուն մէջ մեզի պէս խորհողները քիչ չեն։

«Զմոռնանք որ վարդապետական հակաճառութեանց նորոյթը անցնելու վրայ է», ըսած էինք։ Վեր. Մանուկեան ինչ տարօրինակ և մտքին անընդունելի եզրակացութիւններ կը հանէ այս պարբերութենէն։ Կ'երեւայ որ զայն բոլորովին սխալ հասկցած կամ մէկնաւոր է։ Այս նախադասութիւնը պարզապէս կը նշանակէ թէ վարդապետական նիւթերու շուրջ ճառել անցեալին մէջ եղածին չափ կարեւոր տեղ

չի գրաւէր։ Ասիկայ իրողութիւն մ'է։ Ուզենք չուզենք այս է ճշմարտութիւնը։ Վարդապետական հարցերուն և հաւատոյ հանգանակներուն այսօր այնչափ կարեւորութիւն չի տրուիր, որչափ որ կը տրուէր միջին դարերուն կամ նոյն իսկ առկէ դար մը առաջ։ Ասիկայ երբեք չի նշանակեր թէ (ինչպէս որ Վեր. Մանուկեան հասկցնել կ'ուզէ) վարդապետութիւնը կարեւորութիւնէ ա՛լ բոլորովին զուրկ է։ Ո՛չ, երբեք։ Բըրիտոնէութեան մէջ վարդապետութիւնը շատ մեծ դերք կը գրաւէ։ Ասիկայ անուրանալի է։ Միայն թէ հագեւոր, քրիստոնէական կեանքը վարդապետութենէն, հանգանակէն աւելի բարձր դերք կը բռնէ։ հագեւոր կեանքը առաջնակարգ իսկ վարդապետութիւնը երկրորդական դերք ունի։ Կը ուզենք ուշադրութիւն հրաւիրել նաեւ սա կէտին թէ «նորոյթը անցնելու վրայ է» ըսուած է և ոչ թէ անցած է։ Նորոյթի չանցած տեղեր ալ կան։ Այս երկրին մէջ անպակաս են տնտեսներ և շրջանակներ որոնք վարդապետական խնդիրներու պէտք եղածէն շատ աւելի կարեւորութիւն կուտան։ «Եւ սակայն երկիրը կը դառնայ», ինչպէս որ ըսած էր Կալիլէօ։

Վեր. Ս. Մանուկեանի նամակը կը պարունակէ բուն նիւթէն դուրս կարգ մը ակնարկումներ և խօսքեր որոնք իմ անձիս կը վերաբերին։ Անոնց մասին չեմ ուզեր բան մը ըսել։ պատճառը ծանօթ է։ Ինչպէս որ ալ է, կ'երեւի թէ քաջօրէն վիճաբանելու մասին իմ ունեցած կարծիքս, սովորութիւնս Վեր. Մանուկեանի ունեցածներէն մեծապէս կը տարբերին։

Յարգանքներով
«Բահնիւմ»-ի թղթակիցը

Ծ. խմբ. Այս յօդուածով կը փակենք այս խնդիրը։

ՓԱՐԹԱՄ Խ. ՓԱՐԹԱՄԵԱՆ

1860—1931

Ծնած է Մարաշ, նախնական կրթութիւնը առած է տեղւոյն Բ. Եկեղեցիին դպրոցին մէջ. ապա քիչ մը կօշկակարութեամբ զբաղելէ վերջ Մարաշի Ամերիկացիներուն քով մտած է իւր խոհարար և այդ պաշտօնին մէջ մնացած է 46 տարի, ծառայելով ամէնէն շատ Տաքթըր Լիի, եղած է վստահելի, հաւատարիմ, ճշդապահ, և մաքրութեան բժախնդիր, յատկութիւններ՝ որոնց շնորհիւ գոհ ձգած է ամէնէն դժուարահաճ Ամերիկացիներն իսկ:

Մարաշի Աստուածաբանական Ճեմարանի ուսանողները կարգաւ առանձնաբար կամ խմբովին միշտ հիւրասիրուած են իր տունը, այդ իսկ պատճառաւ իրեն մօտէն ծանօթ էին Հայ Աւետարանական շարժումը և տնոր գործիչները: Իր պաշտօնին բերումով այցելած է Թուրքիոյ բազմաթիւ քաղաքները: Վերջին տարիներուն անձանօթ հիւանդութիւն մը զինքը անհանգիստ ըրած է:

Հիւանդութիւնը հետզհետէ անտանելի կը դառնայ, և վախճալով որ եթէ մեռնի Մարաշի մէջ, առանց իր 5 զաւակներէն ունէ մէկը տեսած ըլլալու աչքերը պիտի գոցէ, Հոկտ. 7, 1930 ին ճամբայ կ'ելլէ Մարաշէն իր տիկնոջը Խաթունին հետ: Հալէպի մէջ Տոքթ. Բէֆթըն Ալթունեան գործողութիւն մը կը կատարէ վրան յաջող կերպով: Նոյեմբեր 8, 1930 ին Պէյրութ հասաւ և իր աղջկան տիկին Բուհամային և փեսին Մանուկ աղա Գերջուրեանի տունը բնակեցաւ: Միւս զաւակները կը գտնուին Հար. Ամերիկայ:

Մայիս 14 Հինգշաբթի տոտուն թեթեւ անհանգստութիւն մը կ'գգայ և անկողին կը մտնէ: Մայիս 16 ին կան-

չուեցաւ հանրածանօթ Մարաշցի բժիշկ Գ. Վարդապետեան, եւ քննութենէն հասկցուեցաւ որ Փարթամ աղան թանջ (Dysentery) ունի: Տունը մէկ շաբթուան դարմանումները անօգուտ եղան: Տոքթ. Վարդապետեանի խորհրդով և հիւանդին փափաքով զինքը փոխադրեցինք Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Հիւանդանոցը, Մայիս 25, Երկուշաբթի առտուն: Տոքթ. Յ. Եէնի Գոմշուհան անմիջապէս մանրագին քննութեան ենթարկեց զինքը: Բայց բոլոր դարմանները անօգուտ անցան և Մայիս 26 ին Երեքշաբթի իրիկուն ժամը 8 ին Աշճը Փարթամ աւանդեց հոգին:

Կաջորդ օրը առտուն փոխադրուեցաւ Պէյրութի Նոր—Մարաշ թաղը, իր փեսին տունը, ուր յուզիչ պաշտամունք մը կատարեց Վեր. Կ. Հասէսեան, որ զայն շատ մօտէն կը ճանչնար: Կէսօրէ ետքը ժամը 3 ին հողին յանձնեցինք մեղաժողձոտ երգերու և արցունքներու մէջ: Աշճը Փարթամ գուլ ու դադար չէր գիտեր, անպատճառ բանով մը զբաղելու էր: Զարմանալի գուգադիպութեամբ մը զինքը թաղեցինք իր ծննդեան տարեդարձին օրը: Հայերէն շատ քիչ գիտէր. և 70 տարեկանին սկսաւ տունը ձեռքը անցած հայերէն թերթերը թըղթատել և կարդալ. գմայլանքով կը ձեռնէր «Կոչնակ Հայաստանի»ն և Հայրենիք Ամսագիրը: Կը կարդար կանոնաւոր կերպով «Նոր Աւետարան», «Մարանաթա», և «Բահնիւմա թրքաբարբառ Հայաստա թերթերը: Ամէն իրիկուն միքանի հոգեւոր երգեր կ'երգեր: Վերջապէս բարեհամբոյր բնաւորութիւն մը ունէր և շատ կատակասէր էր, յաճախ յանգաւոր բառեր գործածելով կը խօսէր: Սրտի գոհունակութիւն ունեցաւ թէ գէթ իր զաւակներէն մէկը տեսաւ, և թէ զինքը իր փեսան պիտի թաղէ իր ձեռքով: Հողը թեթեւ քու վրայ Նոր—Մարաշի մէջ, Աշճը՝ Փարթամ:

ՀԱՍԱԶԳԱՅՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԳԵՐ. ՇԱՀԷ ԵՊՍ. Գասպարեան Անթիլիասէն Եւրոպա մեկնած է Պուտափէշթայի մէջ տեղի ունեցող Եւրոպայի միջազգային Կ. Դպրոցներու համաժողովին մասնակցելու համար: Գասպարեան Սրբազան ապա Գերմանիա պիտի անցնի տեսնուելու Տոքթ. Պարոնիկեանի հետ և անոր հաստատած իւրիմեան Ճեմարանի մասին պաշտօնական տեղեկագրութիւն բերելու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

ՀԱԼԷՊԻ ՔՐԻՍՏՈՍԱՍԻՐԱՅ ընկերութեան երկու լուսաւորչկան անդամները, և մանաւանդ Տիար Մինաս Քիւրքլեան Անտիոքի Սանճաքին մէջ նորահաստատ Հայ գիւղերը աւետարանական գործ կատարած են մօտ երեք ամիս, մասնաւորապէս Կիրակիները Աւաք. Եկեղեցւոյ մէջ շարականներ երգելով և պարզ Աւետարան քարոզելով: Ժողովուրդը մեծապէս զննահատած և համակրանքով ընդունած է անոնց ջանքերը: Ապա եղած խիստ արգելքին պատճառաւ զադրած են հոն գործելէ:

ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ, մտացի և համակրելի երիտասարդ մը, Աթէնքի Սքուլ ալ Բիլիճիի ուսումնաւարանիցէն՝ որ տեսնէ մը ի վեր Մերձաւոր Արեւելքի Ընկերակցութեան իբր ընդհանուր գործիչը յաջող գործունէութիւն աւնեցած էր, հիմա Հալէպի մէջ Հայ Երիտ. Ընկ. ի իբր գործօն վարիչը կ'աշխատի՝ խորհրդակցութեամբ միջյարտնուանական մարմնի մը:

ՏՈՔԹ. Զ. ՅՈՎՆԱՆԵԱՆ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն հրաւիրուած է իբր անդամ մասնակցելու Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան (Նախկին Ուրիւրու Լիկան) վարչական ժողովին: Տիկ.

Սալիհա Պէրէճիքլեան եւս նման հրաւեր մը ստացած է Հալէպի Առաջնորդարանէն: Այս ընկերութիւնը միջյարտնուանական է, և անոր այս հանգամանքը պահելու համար այս կերպով Հալէպի Աւետարանականներէն հրաւիրուած են վերոյիշեալները:

ՏՈՔԹ. ԳՈՆՍԹԱՆԵԱՆ աւուստիկ հայու մը մասին The Scientific American ի 1931 ի Օգոստ. ի թիւին յօդուած մը տեսնուեցաւ, որով այս էտիւպուրկէ աւուստիւարտ բժիշկը կը ներկայացուի իբր «յիշատակարաններու բժիշկ»: Տոքթ. Գոնսթանթեան 1896 ին Ամերիկա եկած է և հիմա յայտնի հոչակ մը ստացած է կարեւոր հին և նոր շէնքերը ժամանակի և կլիմայի աւերիչ ազդեցութենէն ազատ պահելու համար հաստատած իր ճարտարարուհտով: Տոքթ. Գոնսթանթեան շէնքը նախ կատարելապէս կը նորոգէ, կը մաքրէ կը տաքցնէ և ապա օդին կնթակայ մասարը մոմանիւթով (paraffine) կը ծածկէ: Այս նիւթը շինուածանիւթերուն մէջը թափանցելէ ետքը կը կարծրանայ: Այս կերպով ան օդին և խոնաւութեան անթափանցելի կը մնայ:

«ԼԸ ՖՈՒԱՅԷ» ԹԵՐԹԷՆ կը հասկընանք թէ հանգանակութիւն մը բացուած է ձէպէլ Մուսաի վրայ կոթող մը կանգնելու համար, որ պիտի յաւերժացնէ այդ չըջանի քաջարի Հայ գիւղացիներուն Ֆրանսական զօրքի միջոցաւ ազատագրութիւնը Մեծ Պատերազմի սկիզբը: Հանգանակութեան կը մասնակցին Հայեր և Ֆրանսացիներ:

ՄԱՔՍ ՄԱՍՕ Լը Ժուրնալ Թերթին մէջ գրած է թէ Հարաւային Ափրիկէի ազամանգի հանքերուն մէջ հանդիպած է նաեւ Հայերու որոնք հանքագործներէն կը գնին տակաւին իրենց նախնական ձեռն մէջ եղող ադամանդներ:

ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ զաւակնե-
րէն կազմուած Սուրբոյ և Եգիպտոսի
հագեւոր ընկերութիւններու մասնակ-
ցութեամբ ժողով մը ծրագրուած էր թէ-
պէտ, բայց վերջին պահուն՝ հրաւիրա-
գիրները ցրուելէ ետքը՝ յարմար տես-
նուած է տարի մը եւս յետաձգել զայն:

ՎԵՐ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ զաւակը,
Տիար Ճոզէֆ Յարութիւնեան, որ այն-
քան փայլուն կերպով աւարտած էր
Եռնիւրն Սէմիւնէրի մէջ իր Աստուա-
ծաբանական դասընթացքը և նոյն
հաստատութենէն իր վարդապետ փիլի-
սոփայութեան (PH. D.) տիտղոսը շահած
էր մեծ յաջողութեամբ, Շիգակոյի The
Journal of Religion ի 1931 ի թիւ 3
ին մէջ աւելի հմտալից յօդուած մը ձո-
նաթան էտուըրտզի մասին: Այսպիսի
առաջնակարգ թերթի մը մէջ Տր. Յա-
րութիւնեանի յօդուածին հիւրընկալու-
մը մեծ արժէք մը կը ներկայացնէ:
Կը շնորհաւորենք տաղանդաւոր զաւա-
կը և անոր ծնողները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ շինուած Նոր Մա-
լաթիայի մէջ հաստատուած են 150 է
աւելի Մալաթիացիներ, որոնք ունին
կօշիկի գործարան մը և հիւսուածեղէնի
մեքենաներ: 312 Մալաթիացիներ ևս
վրդա առած են Նոր Մալաթիա երթա-
լու համար:

Ներս մտաւ Ռուս ծերունի մը որուն
ճերմակ մազերէն քրտինքը կը հոսէր և
խորշոմած ճակտին վրայ մտահոգութիւն
դրոշմուած էր: Ծերունին կարծես
ներկաները չէր տեսներ՝ պահ մը ինքնի-
րէն խօսելով շրջագայեցաւ սրահին մէջ
ապա նստաւ աթոռի մը վրայ միշտ
մտահոգ: Ահա փարիզցիին ոտքի վրայ
է. « Օրիորդներ, Պարոններ տասը ոսկի
պիտի տամ անոր որ այս ծերուկը համ-
բուրէ » ըսաւ նա ծաղրաւքով: Ամէնը
խնդացին բացի մէկէն: « Ոչ մէկը չկայ
այդ քաջագործութիւնը ընող, հա՛, հա՛,
հա՛ »: Նորէն խնդուքներ: Այս մի-
ջոցին շնորհալի Ռուս օրիորդը ծոցաւ
հօրը ականջին բան մը փսփսաց ապա
համարձակութեամբ ոտքի ելաւ և ծե-
րունիին մօտենալով, « Հայրիկ, թոյլ
կ'ուտամք որ մեր հայրենի սովորու-
թեամբ բարեւեմ ձեզ » հարցուց: « Այո »
ըսաւ ծերունին քունի մէջ խօսողի մը
նման: Աղջիկը ծոցաւ և անոր խոր-
շոմած ճակտին դրոշմեց համբոյր մը և
ապա ներկաներուն դառնալով ըսաւ.
« Մենք Ռուսերս կը յարգենք մեր ծե-
րիւրը »: Խոր լուսութիւն: Ապա զրպա-
նէն տասը ոսկի հանելով ըսաւ Փարիզ-
ցիին « Պրն. յարգեցէք ձեր խոստու-
մը »: Բիշ վերջը ծերունիին ձեռքին
մէջ դրուած էր քսան ոսկի որպէսզի իր
հիւանդին համար ծախսէ:

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷՋԸ

ՄԵՆՔ ԿԸ ՅԱՐԳԵՆՔ ՄԵՐ ԾԵՐԵՐԸ

Այն օրը Փարիզի մէջ հաստատուած
Ռուս համբաւաւոր բժիշկի մը դարմա-
նատան ապաստան սրահը գրեթէ լեցուն
էր յաճախորդներով, որոնց մէջ կար
Ռուս ազնուական մը իր աղջկան հետ և
Փարիզցի թեթեւսլիկ երիտասարդ մը
որ ամէն տեսակ ծաղրածութիւններով
կը խնդացնէր ներկաները: Յանկարծ

ՄԻԱՅՆ ԱՒԵՏԱՐԱՆԸ

«Հայր, ժողովուրդս շատ զարգացած
է: Անոր մէջ կը գտնուին գոլէճական-
ներ և համալսարանի փրօֆէսօրներ:
Քարոզիս մէջ եթէ երկրաբանութենէն
օրինակներ բերելու ըլլամ, կը տեսնեմ
փրօֆ. Ա. ը ճիշդ առջեւս նստած՝ որ
այս գիտութեան դասատու է: Եթէ դի-
ցաբանութեան մասին խօսելու ըլլամ,
կը տեսնեմ Փրօֆ. Բ. ը կազմուէ պատ-
րաստ իմ ամենապզտիկ սխալս ի յայտ

բերելու: Եթէ Գրականութեան վրայով խօսելու ըլլամ, կը վախնամ թէ ունկնդիրներս զայն ինծմէ աւելի լաւ գիտեն: Ես ի՞նչ ընելու եմ», հարցուց երիտասարդ քարոզիչ մը իր հօրը: Հայրը մի քիչ կենալէ յետոյ պատասխանեց. «Սիրելի զաւակս, դուն Միւթն Աւետարանը քարոզէ: Ժողովուրդդ անոր վրայով աւելի գիտնալու պէտք ունի»:»

Ե. Տ. Մ.

ՍՊԱՆՆՈՂ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

«Կը նախընտրեմ սպաննուիլ սուրով քան ազդեցութեամբ» ըսած է Շէյքըքթի:

Կարելի՞ է միթէ ազդեցութեամբ ըսպաննուիլ և սպաննուիլ: Այո՛ անշուշտ: Մեր շուրջը կայ հոգեւորապէս և բարոյապէս սպաննուածներու խոշոր բանակ մը, սպաննուած նոյն իսկ սիրողներու — հայր, մայր, բարեկամ, ուսուցիչ, հոգեւոր դործիչ — թունաւոր ազդեցութեամբը:

Երբեք տեսած ես հայր մը որ տգեղ խօսքեր, հայհոյանքներ լսելի կ'ընէ իր անմեղ մանկան-ականջին, կամ անոր ստախօսութեան, կեղծաւորութեան, խաբերայութեան նոյն իսկ գինեմուտութեան և խաղամուտութեան դասեր կուտայ իր անձնական օրինակով: Ահա այդ իր սիրած օրդւոյն դահիճն է:

Ախ սա Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտը, ճշմարտութիւնները սորվելու ընդունակ. սակայն օր մը իրմէ տարեց մէկ ընկերը կամ ուսուցիչը ծաղրեց Սբ. Գիրքը անոր առջեւ և անոր մատաղ մտքին վրայ ցանեց առաջին արհամարհական վէրքը: Ո՛հ, ոճիւր մը գործուեցաւ հօն:

Հօգ. բարձր կեանք մը ապրելու մը տաղիր եղող սա երիտասարդին նայէ որ անյագ ծարաւ մ'ունի Սբ. Գիրք կարդալու և հոգեւոր սնունդ առնելու: Օր մը մէկը անոր ձեռքը դրաւ փնմա-

քուր գիրք մը: Անոր միտքը խանգարուեցաւ. երեւակայութիւնը անբարոյացաւ և այն օրէն իվեր նա կ'ախորժի անբարոյական վէպեր կարդալէն: Սպաննուեցաւ ան:

Ընթերցող, արդեօք քու ազդեցութիւնդ ալ այդպէս թունաւոր տեսակէն է: Թրխտոս վայ կարդաց քեզի, եթէ այդպէս է: Պէտք է զոջաւ և ապաշխարես: Ե. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՄՏԵՐՄԻԿ ԽՈՍՊԵՐ

Կեանքի ուղիին մէջ անփորձ ճամբորդներէ ոմանք դէպի վեր, և ոմանք դէպի վար կ'ուղեւորին:

Դուն այս երկու խումբերէն որո՞ւն մէջ կը գտնուիս, դէպի բարձրը, վսեմը, քրիստոսավայել կեանքի բարձրութիւնները մագլցողներո՞ւն մէջ, թէ ընդհանուր հոսանքին մատնուած ամէն օր աւելի ու աւելի վարը գլտորուողներուն մեծ խումբին մէջ: Եթէ երկրորդին մէջ ես, վտանգ կայ, չատ մեծ վտանգ. պէտք է ուղիդ փոխես: Իսկ եթէ առաջին ուղին ընտրած ես, հերոսութիւն մըն է ըրածդ: Միայն թէ ուշադրութիւն ըրէ սա երեք բաներուն: (Ա) Հաւատարիմ եղիր քու գաղափարակա-նիդ: Առաջին անգամ երբ քու խղճիդ, քու գաղափարականիդ դաւաճանես, այն օրն իսկ կեանքի բարձրութենէն վար գլտարած պիտի ըլլաս: (Բ) Սբ. Գիրքդ սերտ. ան՝ դէպի վեր մագլցումիդ մէջ ոտքի տեղեր կը ցուցնէ քեզ: (Գ) Վեր նայէ, միշտ վեր, այսինքն աղօթէ՛: Ոմանց համար աղօթքը ձանձրալի ժամավաճառութիւն մըն է: Թշուառ հոգիներ են անոնք: Դէպի բարձրերը տանող ճամբան միայն Աստուած կրնայ առաջնորդել մարդու: Մ. ԱՆՍԸՐԼԵԱՆ

صاحب الامتياز والمدير المسؤول
القس ق. هاروتونيان